ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԴՎԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.11.2016թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77^1-77^6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի հունվարի 18-ի N 5-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արմեն Շահվերդյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Մարինե Սարգսյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի և ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Արդվի համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, պաշտպանության, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման, առողջապահության և քաղաքաշինության ոլորտներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Արդվի համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Արմեն Շահվերդյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Նաիրա Համբարձումյան _____

Մարինե Սարգսյան

Արտակ Դեմիրչյան

Սամվել Խառատյան

Արման Մխիթարյան

Գագիկ Հախինյան

Համայնքի ղեկավար՝
Սամվել Կիրակոսյան